ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«31» հունվարի 2017 թվականի № 13-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 42-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Տրանսգազ» ՍՊԸ-ի 2017թ նոյեմբերի 7-ի թիվ 01-10/724 գրությունը, ընկերության կողմից 2018-2019թթ Աբովյանի ԳՍՊԿ-ում նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության, գազահորերի վերակառուցման և արդիականացման աշխատանքների կատարման ժամանակացույցը, հաշվի առնելով ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման անհրաժեշտությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Տրանսգազ» ՍՊ ընկերությանը՝ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի գազի ստորգետնյա պահեստակայանի (ԳՍՊԿ) տարածքում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար 2013 թվականի հունվարի 31-ին տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹՎ-29/146 թույլտվության մեջ կատարել փոփոխություն՝ ժամկետը երկարաձգել 2 տարով, գործողության ժամկետի ավարտը սահմանել՝ 2019թ-ի դեկտեմբերի 31-ը:

2. Ընդերքի գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն 2013 թվականի հունվարի 31-ի թիվ ՊՎ-146 ընդերքօգտագործման պայմանագրում և ծանուցել ընկերությանը հրամանը ստանալուց հետո 10-օրյա

ժամկետում ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացվնելու մասին.

2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունը վավերացվելուց հետո, 10-օրյա ժամկետում, ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվության, ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխված տարբերակը,

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրերը իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու, ինչպես նաև, սույն հրամանի 1-ին կետի պայմանը չապահովելու դեպքում, ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. *«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին* - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ